ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁԵՐԻ ՄԱՐԶԻ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Պ Ա Տ Ճ Ե Ն

11 օգոստոսի 2022 թվականի N 224-Ա

ՄՈՒՇԵՂ ԱՐԱՅԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի, 275-283-րդ, 219.[1]-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հաշվի առնելով ՀՀ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկ բաժնի պետի՝ 2022 թվականի հունիսի 28-ի N 84/1141 գրությունը և գրությամբ ներկայացված փաստական տվյալները, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքում իրավախախտումների վերաբերյալ վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 11-ի N 2 արձանագրությունը՝ ***որոշում եմ***՝

1. Առանց թույլտվության հանրային սննդի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում իրականացնելու, առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպման և իրացման համար Ջերմուկ քաղաքի բնակիչ Մուշեղ Արայի Սողոմոնյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նշանակել վարչական տուգանք՝ 100 000 (հարյուր հազար) դրամի չափով, նույն հոդվածի 7-րդ մասի հատկանիշներով՝ 80 000 (ութսուն հազար) դրամի չափով :

2. Մուշեղ Արայի Սողոմոնյանը պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Ջերմուկի համայնքապետարանի 900365031187 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել իրավախախտումների վերաբերյալ վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովին:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մուշեղ Արայի Սողոմոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ